գործածվում էր որպես ծամոն, ոգեշնչի՝ սեղ-սեղ խառնված ուրիշ բաղադրության հետ։ Շատ էր առում կանեփի մի սեռակը, ծառ-կանեփ անունով, որը համեմատած ուրիշ շրջանների նույն տեսակի հետ, երկու, նույնիսկ երեք անգամ հասա ու երկար էր, հետևարար նույն համեմատությամբ էլ շատ կաթ էր պարունակում իր արմատներում և գոգոնների։ Կարված կանեփի կաթը սեղում հոսեցնում էին արևից ջերմացած սալարարների վրա և անցնում հայրդին և այդպես շարունակաբար մինչև արևմուտ, ապա վերադառնում էին այնտեղ, որտեղից սկսել էին։ Մինչ այդ, կաթն արդեն մակարդված և ձյութը պատրաստ էր լինում։ Հավարում էին խուզված ձյութը և վերածում գնդիկների, որոնք դանվում էին իրենց օգտագործման համար, իսկ վանատորի հանվելիքները վերածվում էին բարակ թերթիկների և համապատասխան գործիքով կարվում միապատի կլոր լեփերի՝ ոսկեդրամի չափ։ Այս ձյութի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ չէր չորանում, պահում էր բուսական անուշ կաթնահամը և խիստ առաձգական էր։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Լեռնային Դերսիմը չուներ պետական հաղորդակցության միջոցներ։ Գլխավոր խութերին, որը Երզնկան կապում էր Կարինին և որն անցնում էր Սանասարի կիրճից, Ռեսիֆիեի բարձունքից, Դերջանի հովտից և Մամախաթունից, դուրս էր մնում Դերսիմի սահմաններից։ Հաղորդակցության բոլոր ճանապարհները դալիս կանգ էին առնում վարչական փոքր կենտրոնների առջև։ Խարբերդից Խոդաթ, Բերկրի, Բալու, Կարինից Ռաշդաղջուր, Էղի, Երզնկայից Բոլոմորի, Զմշկածաղ և Զարանջակ, ահա պետական համփաների այն սրամադիր, որ մեկնելով կենտրոն բաղարներից, դալիս էր կանգ առնելու Դերսիմի լեռնային շրջանի սահմանների մուտքերի մոտ։ Շրջկենտրոններից դեպի Դերսիմի կենտրոնական մասը հաղորդակցության համփաները անբարեկարգ էին։

Հակառակ պետական այն որոշների, որը պարտավորեցնում էր Թուրքիայի բոլոր բաղաքացիներին, 16 տարեկանից մինչև 60 տարեկանը, տարին 10 օր հանապարհաշինական պարտադիր աշխատանքի կամ դրան համապատասխան նյութական փոխհատուցման, դրա համարժեքը դանձվում և մուծվում էր պետական դանձարան, բայց Դերսիմի լեռնաշխարհում խութերներ չկային չինվում, գյուղից-գյուղ, գյուղերից շրջկենտրոններ միայն արահետներ էին։ Խարբերդ-Եղազիզ, Խարբերդ—Բերի և Բալու խութերին օգտագործվում էր առավելապես դինվորական նպատակներով։ Գյուղերից դաչաները, սարերն ու անտառները առանց արահետ-համփաների համառեղ ջանքերով չինում և նորոգում էին գյուղացիները։ Այդ գործին մասնակցում էին աշխատունակ բոլոր ազամարդիկ, բացառյալ թուրքի դեմ կռվելիս մարտերում զոհվածների բնտանիքները և ծերերը։

Մինչև վարչական կենտրոնները (բազարները կամ գյուղաբազարները) երկարող համփաների ուղղությունն ու տարածությունը հետևյալն էր։

Դեպի արևելք՝ Քղի-Կարին. Քղի-Մամախաթուն։

1. Քղիից Կարին լեռնային հանապարհով 26 մամ էր, բայց համփաների դժվարության, ելևէջների պատճառով ոտքով կամ ջորիով չորս որ էր տևում։ Առաջին որ՝ Քղիից պետք էր բարձրանալ Գոշմար սարը (որը տեղ-տեղ անտառածածկ և դժվարանցանելի էր), առանց հասնելու լեռան դագաթը, թերվել աջ և բալլել միշտ դեպի արևելք։ Ճամփան արահետ էր, մերթ իջնում էր ձորը և մերթ բարձրանում հանդիպակաց սարալանջը, երեկոյան հասցնում էր Մելիբան։ Գյուղ մտնելու համար պետք էր անցնել փայտե կամուրջը, այդպես ջուրը արագավազ և անանցանելի էր։ Մելիբան հայարնակ գյուղը գտնվում էր երկու լեռների միջև, Գոշմար և Աժդահա սարերի միացման սարահարթում, մասնավոր իջևաններ գոյություն չունեին։ Տանուտերն էր կարգադրում օթևանելու հարցը և տալիս անհրաժեշտ պիտույրներ, եթե համփորդը կամ համփորդները ծանոթներ կամ բարեկամներ և կամ կապեր չունեին գյուղի բնակչության հետ։ Երկրորդ օր՝ Մելիբանից բարձրանալ Աժդահա սարի սարաստեղերը, անցնել դեղատեսիլ լեռնային արոտավայրերով, դիտել և զմայլվել բարացած հոտի, կթվորների ու հովվի շատ բնական և տղավորիչ բարարձաններով ու դեռ չհասած լեռան դագաթի աժդահայի բարարձանի բարձրությանը, անցնել աջ կողմի ձորից և իջնել վար, կրկին բարձրանալ մի նոր դագաթ և երեկոյան կանգ առնել Քղիի սահմաններից դուրս, Հելլեն նախկին հունարնակ, այժմ քրդարնակ գյուղում, ուր և դիշերել։ Երրորդ օր՝ Հելլեն գյուղից դուրս դալով, բարձրանալ անտառածածկ խորդու լեռը։ Այստեղ համփան բաժանվում էր երկու մասի, առաջինը բարձրանում էր դեպի լեռան դագաթները, իսկ երկրորդը՝ աջակողմի սարահարթից իջնում հանդիպակաց ձորը, որը կարե-

լի էր անցնել ջորիով կամ ձիով։ Ջուրն արագավազ էր, կամուրջը շատ անապահով։ Շարունակելով ճամփան դժվարանցանելի արահետներից, երեկոյան հասնել Տաշաղը բրդարնակ գյուղը, ուր և դիշերել։ Չորրորդ օր՝ Տաշաղրից արահետը անցնում էր Ղարա-դայա լեռան ծերպերից, բարձրանում ապառաժների ստորոտը, որտեղից թերվում վար և հասնում դեղտանեսիլ մի լեռնադաշտ Կարինի սահմանների մեջ, կեսօրից հետո էլ՝ Խարբերդի դուռը, որտեղից մտնում էր Կարին։

II. Քղիից Մամախաթուն կամ Դերջան (հյուսիս-արևելք) 12 ժամ էր կամ երկու օրվա ճանապարհ։ Առաջին օր՝ Քղիից հասնել Մելիբան և դիշերել այնտեղ։ Երկրորդ օր՝ Մելիբանից փոքրանակ դեպի արևելք՝ Աժդահա սարը բարձրանալու, կամուրջի աջ կողմից թերվել հյուսիս, գյուղի արտաքվայրից անցնելուց հետո բարձրանալ խողանա սարի ձորամիջից մինչև գագաթը և անցնել Աղի-ջուր մեծ ձորը։ Աղի-ջուրը անանցանելի էր, կամուրջը գտնվում էր Ցայլահղ գյուղի արևմտյան կողմում, կամուրջն անցնելուց մի ժամ հետո գալիս էր Մամախաթուն։ Մամախաթունից դաշտի միջով հնշանությամբ կարելի էր այցելել Դերջանի բոլոր գյուղերը, հերթական կարգով։

III. Քղիից Երզնկա 22 ժամվա (ուղիղ գծով) կամ երեքուկես օրվա ճանապարհ էր։ Արահետը՝ լեռնային և շատ ցից, տեղ-տեղ անցնում էր անտառներից, բարձրանում սարերի գագաթը և իջնում իսոր ձորերը։ Առաջին օր՝ բարձրանալ Պաղը-պապայի սարալանջը, անցնել երկու ձորերից, որոնք այնքան էլ խորը չէին, առանց ելնելու Պաղրի գագաթը թերվել արևմուտք, շարունակել ճամփան նույն ուղղությամբ և առանց շեղվելու կենտրոնական արահետից (աջ և ձախ խաչաձևվում էին զանազան գյուղեր տանող արահետներ), դեռ Պաղրը չանցած հասնել Հերտիֆ հայաբնակ գյուղը, ուր և դիշերել։ Երկրորդ օր՝ Հերտիֆից բարձրանալ Քերթեսուր սարը (ճամփան շատ նեղ և ցից էր), անցնել անտառների ու ապառաժների միջով։ Ամենադժվարը Քերթեսուրի կիրճն էր, որ գտնվում էր Պաղրի և Քերթեսուրի անմատչելի ապառաժների միջև, Հերտիֆից Աղայլ-Շենլիկ տանող ճամփին։ Այս կիրճը այնքան նեղ և անառիկ էր, որ մի տասնյակ մարդով կարելի էր դիմադրել հազարների։ Սա թույլ չէր տալիս, որ Երզնկայի բանակը Ավղերտից կամ Մնձուրից մտներ Դերսիմի ինքնանկախ շրջանը։ Քերթեսուրի ժայռերի ստորոտից հոսում էր Հերտիֆի ջուրը, ճամփան անցնում էր ժայռերի մեջտեղից և ապառաժների սրտից ու հասնում Աղայլ-Շենլիկ, ուր և դիշերում էին։ Աղայլ-Շենլիկից ճամփան դարձյալ անցնում էր Քերթեսուրի կողերով և կիրճի շարունակությամբ ու կույս անտառներով բարձրանում Մեղջան լեռան գագաթամերձ ստորայանջը և ցից դառիթափով իջնում վար, հասնում Մեղուցիկ (Մեղվցիկ) գուտ հայաբնակ գյուղը, ուր և դիշերում էին։ Մեղուցիկից Երզնկա հասնելու համար շարունակվում էր լեռների ստորոտից և անցնելով զանազան գյուղերից, Երզնկայի հարավային կողմից անցնում Եփրատի վրա կառուցված գույգ կամուրջներից (մեծ գետի և փոքր գետի կամուրջներ), չորս ժամից հասնում Երզնկա։

IV. Ճապաղջրից Բալու, Բալուից Խարբերդ 18 ժամվա (ուղիղ գծով) կամ երկու օրվա ճանապարհ էր ձիով կամ ջորիով։ Խճուղին անցնում էր Արածանիի ձախափնյա գծով և երկարում դեպի արևմուտք, միշտ հետևելով գետի հոսանքին։ Առաջին օր՝ Ճապաղջրից առանց գետն անցնելու, ուղղակի դեպի արևմուտք խճուղին անցնում էր Խոշմաթ, Ներքին-Նալշի հայկական գյուղերից, երեկոյան ուշ հասնում Բալու, ուր կարելի էր դիշերել որևէ օթևանի կամ խանի մեջ։ Երկրորդ օր՝ առավոտյան շատ կանուխ մեկնելով Բալուից, անցնել Բալուի կամուրջից և ուղղվել դեպի Տավրոսի լեռնաշղթան, ապա թերվելով արևմուտք, անցնել Թիլ, Թրխե, Նաճարան հայաբնակ և Վերի-Վարդենիկ, Սարիղամիշ բրդական գյուղերից։ Ախոռ գյուղի ստորոտից երեկոյան ուշ հասնում էին Խարբերդ կուսակալանիստ քաղաքը։

V. Խոզաթից Խարբերդ 8 ժամվա (ուղիղ գծով) կամ մեկ օրվա ճանապարհ էր։ Խոզաթից հարավ խճուղին անցնում էր Ահրիման, Մերխո, Մեռնիմեկ, Թիլ բրդարնակ գյուղերով և Ուռեկ (չշփոթել Երզնկայի նույնանուն գյուղի հետ) հայաբնակ գյուղով, երեկոյան հասնում Խարբերդ։

VI. Մյուսները ներքին հաղորդակցության ուղիներն էին, որոնք վերաբերում էին միջգյուղային տրահետային ցանցին, որը տրված է տեղադրության բաժնում։

Դերսիմն արտաքին աշխարհի հետ կապող ուղիները հետևյալներն էին։

I. Տիգրանակերտից Վան։ Տիգրանակերտից Բաղեշ և Տիգրանակերտից Կարին գլխավոր խճուղիներից ամենակարճը անցնում էր Դերսիմով։ Տիգրանակերտ-Արղնի-Մատեն - Խարբերդ-Բալու-Ճապաղջուր խճուղին ամենահին ժամանակներից ընդհուպ մինչև XIX դարը գործածված ամենաբանուկ և ամենակարճ ճամփան է եղել, ոռկայն թրքական գորքերի խիզախությունների հետևանքով այդ ճանապարհը անգործածելի էր դարձել ու

դրան փոխարինել էր Տիգրանակերտ-Խարբերդ-Երզնկա-Մամախաթուն-Կարին խճուղին, որը երբեմն ավելի երկար էր, բան նախորդը և որը զինվորական ու առևտրական ճամփա էր ու խուսափում էր Դերսիմից։

II. Դերսիմ-Մալաթիա-Սեբաստիա-Սամսոն խճուղին։ Սա ուներ երկու ճանապարհ, մեկը՝ պաշտոնական, մյուսը՝ անպաշտոն։ Պաշտոնականն անցնում էր Բերդակ-Խարբերդ-Իդոլի-Մալաթիա-Հարիմ-խան-Ղանդալ - Սեբաստիա - Ամասիա-Սամսոն գծով։ Անպաշտոնը, որն ամենակարճը և բրդերի համար ամենաապահով լեռնային ճանապարհն էր, սկսվում էր Զմշկածաղից, անցնում Արարկիրի լեռներից, Ակնա վրայով իջնում Տիվրիկ, այդտեղից էլ՝ Սեբաստիա-Սամսոն։

III. Դերսիմ-Երզնկա-Շապին-Գարահիսար-Կիրասուն խճուղին։ Սա սկսվում էր Երզնկայի հովտի արահետից՝ Բլուր գյուղից, կտրում հովիտը և առանց Երզնկա մտնելու անցնում Կեչուտից ու Կամախի կիրճը չհասնելով, ուղղվում դեպի Զարտախլիր լեռներն ու անցնելով կիրճից թեքվում դեպի հյուսիս, հասնում Զեմենտաղին, անցնում Շապին-Գարահիսարից և հասնում Կիրասուն։

IV. Դերսիմ-Երզնկա-Կյումուշխանե-Տրապիզոն խճուղին։ Սա անցնում էր Բոլոմորիից Երզնկա, ապա հյուսիս՝ Սրբնդոր լեռն ու Քյոսետաղը, իջնում Կյումուշիանե և կտրելով Զվանան, հասնում Տրապիզոն։

Կար և լեռնային ամենակարճ ճանապարհը, որն անցնում էր Մեծոյան լեռան ստորոտից։ Այս ճանապարհը Տիգրանակերտ-Խարբերդ-Խողաթ-Օվաճդ-Երզնկա գիծն էր, սակայն թե բնական դժվարությունները և թե դերսիմցիների ընդդիմությունը արգելք էին լինում սրա օգտագործմանը։ Դերսիմցիներն օգտվում էին դրանից միայն իրենց ներքին կարիքների համար, ինչպես և արշավանքների ժամանակ կամ Սև ծովի հետ կապ պահելու համար։

Բացի Դերջանի, Արածանիի աջ և ձախափնյա դաշտահովիտներից և մասամբ Զարսանջակի լեռնահովտից, մնացյալ շրջաններում սայլ օգտագործելու հնարավորություն չկար, ուստի լեռնաշխարհի յոթ ամսվա փոխադրական միջոցը դրաստն էր, առավելապես էշը, թեև որպես այդպիսին օգտվում էին նաև եզից, ձիուց ու ջորուց, իսկ խիստ լեռնոտ վայրերում այդ ամենին փոխարինում էր շալակտարը։

Լեռնային բեռնակիր եղները ավելի շատ ծանրություն էին կրում, բան ամենալավ էշը։ Դրանք առանց պայտի էին լինում, կճղակները ավելի դիմացկուն էին, բան պայտը, կճղակների եղունգի ծայրերը շատ սուր և տոկուն էին, կարող էին մագլցել ժայռերն ի վեր, միշտ օգտագործելով եղունգի սրածայր մասը, մխրճելով այն քարերի ու ապառաժների մեջ։ Դերսիմում բեռնատար եղը օգտագործվում էր առհասարակ դժվարանցանելի ճանապարհներից բեռներ փոխադրելու, նույնիսկ հեծնելու համար։

Եղների և էշերի համար ոչ թե համետ, այլ չուլ էին օգտագործում, որը փալասից, թաղիքից կարված, առանց փայտե մասերի մի տեսակ փալան էր, վրայի մասը մորթատատ։ Թաղիքի կողմը դրվում էր անասունի մեջքին, իսկ մորթին դրսի կողմն էր լինում։ Թաղիքի և մորթու մեջտեղը դրվում էր չորացած հուրը խոտ (փալտխ) և կարվում լարանով, պահելով համեմատական թեքություն մեջքից դեպի կողերը։ Ուներ նաև արգելակներ, կրծկալ ու պոչատակ, որոնք պատրաստվում էին բրդից հյուսված դոտիներից։ Առաջինը թույլ չէր տալիս, որ անասունը սար բարձրանալիս չուլը ետ ընկներ, իսկ երկրորդը՝ պոչատակից անցնող լայն դոտին (զուսդուն), թույլ չէր տալիս բեռը վար սահելու, երբ անասունը վայրէջք էր կատարում։ Նույն ձևի դոտիով չուլը կապվում էր փորատակից՝ կրծքին մոտիկ, առջևի ոտքերին առընթեր։ Նույն տեսակի չուլեր օգտագործվում էին նաև ավանակների բեռնավորման համար։ Առաջինը քրդերեն ճրլեկայի (եզի չուլ) էր կոչվում, երկրորդը՝ ճրլեհերի (էշի չուլ)։ Չուլը սարքում էին իրենք գյուղացիները, իսկ ձիու թամբը (սայար), ջորու փալանը պատրաստվում էր շրջկենտրոնների համետագործ-թաղիքագործների կողմից և վաճառվում փոխանակության կարգով։

Կային այնպիսի գյուղեր, ուր ամառ թե ձմեռ բեռները փոխադրվում էին շալակով, որն անում էին տղամարդկանց հետ նաև երիտասարդ կանայք։ Նրանք թև-շալակով կրում էին իշաբեռից ավելի խոտ՝ 10, 12, մինչև 16 խորոմը մեկ շալակ արած։ Ձմռան ամիսներին, երբ ձյան միակտուր հաստ սավանի տակ ծածկված էր լինում բարձրավանգակը, փոխադրական միակ միջոցը մնում էր շալակտարը։

Դերսիմի լեռնաշխարհի կլիման խիստ էր, ձմռան տևողությունը՝ հինգ ամիս, առատ ձյուն էր տեղում, տեղ-տեղ հասնելով մինչև հինգ մետրի, լեռ ու ձոր ծածկվում էր ձյան հաստ սավանով, ձորերում կուտակված ձյունի հաստ խավը հասնում էր տասից մինչև հիսուն մետրի, նայած բուսիների ուղղությանը և փոթորիկների հարատևությանը։ Այդ ամիսներին Դերսիմը կղզիանում,

արտաքին աշխարհից կտրվում, երթևեկությունը խիստ դժվարանում էր[1], որպես փոխադրական միջոց կենդանու ուժին փոխարինում էր մարդու ուժը, շալակտարը դառնում էր լեռնաշխարհի կարավանը (բեվրան), իսկ հունվար և փետրվար ամիսներին՝ նաև սահնակը, որը թեև քաշվում էր մարդու ուժով, բայց տեղ-տեղ էլ օգտագործում էին սահնակտիր շներ։ Այս վերջին պարագան աղաների, մյութեկալիպների (բոնակալ) և բեկերի սեփականությունն էր, աշխատավոր ժողովուրդը բավարարվում էր շալակտարով կամ մարդու ուժով աշխատեցված սահնակով։ Սահնակն օգտագործում էին, երբ ձյունը բուլուն էր։



1



2



3

Նկ. 18. 1. Լեռնային սահնակ։ 2. Հետիք (աջ ոտքի)— ա. հետիքի վրա ամրացված տրեխ, 3. հետիք (աջ և ձախ ոտքերի), ա. հետիքներին ամրացրած տրեխներ։

Կամուրջներ։ Շատ երկար պիտի լիներ թվարկումն ու բնութագրումն այն բոլոր կամուրջների, որոնք ձգված էին Եփրատ կամ Արածանի գետերին միացող ջրերի վրա, որովհետև այդ ջրերը բոլորն էլ մեկից ավել կամուրջներ ունեին։ Այսպես, Քղիի ջուրը 16 կամուրջ ուներ, որոնցից մի քանիսը՝ քարուկրից։ Դրանցից էին Խրա գյուղի և Պըլը-ճանի կամուրջը, Հանդոտան և Տինկի միջև քարուկրե կամուրջը, Մոզի և Ջերմանի միջև եղած կամուրջը, Քղին Առեքին միացնող քարաշեն կամուրջը, որոնք գտնվում էին միջդյուղային հաղորդակցությանը։

Այժմ կհիշատակվեն այն կամուրջները միայն, որոնք ձգված էին Եփրատ և Արածանի գետերի վրա։

1. Երզնկան Կարինին միացնող առաջին և ամենագլխավոր կամուրջը Եփրատի վրա կառուցված Կոթերի կամուրջն էր՝ Դերջանի Կոթեր և Վիժան գյուղերի միջև, որն ամենարանուկն էր։

Այս կամուրջի մասին մի ավանդական պատմություն եմ կարդացել Վիժանի ամենահին և ամենամեծ տոհմերից մեկի ավագ Պուլիկ Քեհյայի մոտ։ Գրվածքը մնացել էր իր պապերից, սակայն Պուլիկ Քեհյայի կրտսեր եղբայրը (ուսուցիչ, ապա քահանա Թորոսը) վերածել էր այն աշխարհաբարի։

Ավանդությունն ասում էր, թե տարիների ընթացքին մի շարք փորձեր էին կատարվել գետի հենց այդ մասում կամուրջ շինելու համար, բայց չէին հաջողած։ Հաղիվ նախնական աշխատանքները կատարվում էին, կամուրջի հիմքը ջրից մի բիչ դուրս էր ցցվում, և ահա Եփրատի կատաղի ալիքները հիմնահատակ կործանում էին այն։ Մի անվանի հայ վարպետ, Տրդատ-ղալֆա անունով, որ մի շարք կամուրջներ, բերդեր և բաղնիքներ էր կառուցել և մեծ համբավ ձեռք բերել, ստանձնում է այս նոր կամուրջի կառուցման պատասխանատվությունը և ձեռնարկում աշխատանքի։ Սակայն սա ևս մատնվում է անհաջողության՝ նա կառուցում է, Եփրատը քանդում։ Գործի ձախողումը հուսահատության է մատնում անվանի ղալֆային, որը միայն իր կյանքին վերջ տալով կփրկեր կառուցողի իր պատիվը։ Հենց այդ ժամանակ էլ նրա 16-ամյա աղջիկը, որը շատ սիրելիս է լինում հորը, խիստ զգացված նրա անհաջողությունից, գիշերը մի երազ է տեսնում։ Իբր թե ջրերի ոպիտակամորուս ու շատ բարձրահասակ տերը (փիրը) ներկայանում է Արեգնազանին և խոսում այսպես.

— Ասա հորդ, իզուր տեղը թող չփորձի կառուցել կամուրջը, այն կանգուն կմնա այն ատեն միայն, երբ մի մարդկային զոհ մատուցվի ջրերի աստծուն։

— Մանչ թե՞ աղջիկ,— հարցնում է Արեգնազանը։

— Որ սեռից էլ լինի, 18 տարին չլրացած և

---

[1] Դերսիմի բարձրավանդակում ճամփորդների հանգըստանալու կամ գիշերելու հատուկ հանգրվաններ, իջևաններ (խան) չկային։ Ուղևորներն իրենց բեռնատար անասուններով իջևանում էին ծանոթների կամ պատահած ընտանիքի մոտ, որը հյուրասիրում, մեծարում և ճանապարհ էր գնում իր օջախին այցելող և տան գուռը բաց անող աստծու հյուրին։ Եթե ուղևորները շատ էին լինում, բաժանվում էին տների միջև։

աշխարհ չխառնված (չամուսնացած) մեկը պետք է լինի,--ասում է ու աներևութանում։

Աղջիկը զարհուրած այս տեսիլից, պատմում է այն հորը, իսկ հայրը պաղարյունությամբ, բայց միշտ տխուր, շոյում է աղջկա ճակատի խոպոպները և պատասխանում.

— Այո, դստրիկս, ջրերի աստվածը մարդկային զոհ է պահանջում, ես քեզանից առաջ տեսել էի նույն սպիտակամորուսին, նա ինձ էլ խորհուրդ տվեց զոհաբերել մեկին, բայց, ավա՜ղ, դստրիկս, հայրդ չի կարող իր փառքի և համբավի համար արնտեր դառնալ և այդ է պատճառը, որ մտածում եմ ինքզինքս զոհել, զուցե զոհանա նա և ուրիշները կառուցեն այս կամուրջը։

Եվ ոսկայն տեսիլը կրկնվում է երկրորդ անգամ, այնպես որ աղջիկը որոշում է ինքզինքը տրամադրել զոհաբերության և իր անզառնալի որոշումը հայտնում է իր ծնողաց։

Հայրը բացարձակապես մերժում է, աղջիկը սպառնում է իրեն ջուրը նետել այն տեղը, ուր կամուրջ էին կառուցելու։ Հայրը ճարահատ տեղի է տալիս և ձեռնարկում կամուրջի կառուցմանը։ Երբ հիմքը գուրս է գալիս ջրից և ձեռնարկում է կենտրոնական կամարի քարերի զետեղմանը, ներկայանում է զոհը՝ Արեգնաղանը, հարսանեկան հագուստներով և ծաղիկներով զարդարված ու իրեղրում, որ կատարվի սրբի կամքը։

Աղջկան ուղղահայաց կանգնեցնում են կենտրոնական կամարի հյուսվածքի մեջ և պատը սկսում են շարել, իսկ Արեգնաղանը երգում է.

Հայրիկ, ա՜խ հայրիկ,
Շարեցին, շարեցին, մինչև ծնկներս շարեցին։
Թող շարեն արագ, թող կանգնի կամուրջ ծծերուս վրա։

Հայրիկ, ա՜խ հայրիկ,
Շարեցին, շարեցին, մինչև ծծերս շարեցին։
Թող շարեն արագ, թող կանգնի կամուրջ մարդկության համար։

Հայրիկ, ա՜խ հայրիկ,
Շարեցին, շարեցին, մինչև աչերս շարեցին։
Թող շարեն արագ, չտեսնեմ աստղեր, լուսին, արեգակ։

Հայրիկ, ա՜խ հայրիկ,
Շարեցին, շարեցին, մինչև պսակս շարեցին։
Թող շարեն արագ, փեսան դեռ չեկած մտնեմ առագաստ։

Ողբի շարունակությունը երկար է, բայց չեմ հիշում։

Ավանդությունն ասում էր, թե կամուրջը կառուցվում էր մեծ ճարտարությամբ և կա ու կմնա դարերի ընթացքին, որպես կենդանի կոթող նահատակված կույսին՝ Արեգնաղանին։

Ասվում էր, թե սդակիր հայրը, ի հիշատակ իր զավակի, կամուրջից մի քիչ վար, հիշատ դեմ-հանդիման այն կամարին, ուր վարդետը հյուսել էր իր աղջկա զերեզմանի պատը՝ կամուրջը, սրբատաշ քարերով կառուցել է ստորերկրյա մի մեծ ավազան, որը միակ մի դուռ ունի լայն ու կամարակապ, որտեղով ներս են խուժում Եփրատի կատաղի ալիքները, զարնվում պատերին, շող ու փրփուր բարձրացնում մինչև ձեղունը ու կրկին ետ դառնում ավազանի դռան ձախ կողմից։

Ասվում էր նույնպես, թե ստորջրյա այս ավազանը ջրից շատ բարձր ունի թռչուններ և կամարաձև մի տաճար, որի աջ կողմի պատի վրա բարից կոփված մի խոյի զլուխ կա։ Թաքստոցները շինված են տաճարի խորության ձախ կողմում, ուր պահվում են դրչագիր մագաղաթներ և դանձեր։ Վարժ լողորդները, կյանքները վտանգելու դնով, տոնական օրերին և կիրակնամուտին մբռնում են ավազանը, լողալով մոտենում տաճարին, բարձրանում վեր և ձեռ դնում մշտավառ կանթեղին, անմար պահելու Արեգնաղանի զոհաբերության հիշատակը։

Ասողներ կային նաև, թե տոնական օրերին և կիրակնամուտի զիշերները երգեցողության, պարի և ցնծության ձայներ են լսվում խորքից, իբր թե «Քրնց մեղ աղեկ»-ները ջրի սրբի առաջնորդությամբ Արեգնաղանի հարսանեկան հանդեսն են անում։

Կոթերի պատմական այս կամուրջը և ստորերկրյա ջրամբար-ավազանը դիմանալով Եփրատի ամեհի ալիքների դարավոր պայքարին, անվթար մնացել էր մինչև մեր օրերը։

2. Եփրատի վրա մյուս կամուրջը Ճեսլիճիե լեռան ստորոտում, Սանսա կիրճի մուտքի վրա, Զայդոմի դիմաց եղած շարժական Սատանի կամուրջն էր, որը գտնվում էր դերսիմցիների վերահսկողության տակ։ Կամուրջը ծառայում էր միայն Դերսիմի բրդերի և հայերի անցուդարձին։ Այստեղով էր անցնում Տիսլյոյին-Երզնկա-Կարին խճուղին։ Անցորդները իրենցից հետո վերցնում էին այն մեծ զերանը, որը կամուրջի գեր էր կատարում։

3. Հաջորդը Խալիլաղայի և Զորբերնա խանների միջև Եփրատի վրա ձգված Մթին կամուրջն էր։ Սա թեև շինված էր Ավզերտի-կետիկի թրքական զորանոցների պաշտպանության համար,

բայց գանվում էր դերսիմցիների անմիջական հսկողության տակ։

4—5. Այնուհետև դալիս էին Երդնկայի ստորոտում, դեպի Դերսիմ տանող ճամփի վրա և երկրորդ մեծ կղզու գրեթե վերջույթում, պզտիկ և մեծ գետերի վրա կառուցված կամարակապ, բարակրից շինված կամուրջները։

Մեծ գետի կամուրջը գտնվում էր գինևորական խիստ հսկողության տակ և պաշտպանված էր գնդացիրներով ու թնդանոթներով[1]։

Ձերի փաշայի ադարակից մի բիչ վար, Եփրատի երկու ճյուղերի միացման կետի ստորոտում կանգուն էին մնում Արշակ թագավորի կառուցած բարակրի մեծ կամուրջի երկու եզերքի գլխավոր սյուները։ Սա կոչվում էր Արշակա կամուրջ[2]։

6. Մյուսը Կամախի կիրճի վերջույթում Թորգանի տակ ձգված կամուրջն էր։ Սա էլ Դերսիմ տանող ճանապարհներից մեկն էր և գտնվում էր պետական հսկողության տակ։

7. Այս շրջանի վերջին կամուրջը Կամախի բարակրի մեծ կամուրջն էր, որի ստորոտում Եփրատին էր միանում Կամախը երկու մասի բաժանող Թանաձորի մեծ ջուրը։

Դերսիմի արևելյան կողմում, Արածանու վրա ձգված առաջին կամուրջը Ճապաղջրի առջևի կամուրջն էր, որը Դերսիմի նախագուռն էր, ուր Արածանուն էր միանում Ճապաղջուրը։

Զանց ենք առնում մեկ-մեկ ներկայացնելու Երչրկ-չայի երկայնքով ձգված տասից ավելի կամուրջները։

Ճապաղջուրն էլ ուներ բազմաթիվ կամուրջներ, որոնցից հիշատակության արժանի է Քոսի և Զաքի մեջտեղը, Զանարշիլարի ստորոտում կառուցված կամուրջը, որը մի շարք գյուղերի հաղորդակցության ճամփան էր։ Կար և նույն ջրի մի այլ կամուրջ, որը շինված էր Շարտիպի ստորոտում, դեռ Արածանուն չխառնված տեղում, վարար գետի վրա։

Երրորդ և անվանի կամուրջը Բալուի կամուրջն էր, որը Դերսիմի երկրորդ նախագուռն էր համարվում։

Չորրորդը Բերկրիի ջրի միացման կետից բիչ վերև, այդ ջրի վրա, Թիլի և Աղճերենտի միջև ձգված կամուրջն էր, որին հաջորդում էր Արածանիի վրա կառուցված կամուրջը։ Սրանք բոլորը, որ գտնվում էին Դերսիմի սահմաններում, պահվում էին բրդերի անմիջական հսկողության տակ։

Հինգերորդը Խոզաթի կամուրջն էր։ Սա ևս ծառայում էր միայն բաղաթի և շրջակա գյուղերի միջև եղած երթևեկության։

Կային նաև Բոյամորիի չորս կամուրջը, Զարասանջակի և բազմաթիվ այլ կամուրջներ, որոնք բոլորն էլ սահմանված էին ներքին երթևեկության համար, կառուցված լեռնային արագահոս գետերի ու գետակների վրա։ Կամուրջների կառուցումը կատարվում էր երկու կերպ՝ հանրային և անհատական նախաձեռնությամբ։ Թեև անհատականն էլ մտնում էր հանրային կամուրջների շարքը, բայց ծախսերը հոգացվում էին կառուցողի կողմից։ Նման պարագային կամուրջը կոչվում էր կառուցել տվողի կամ նրա կողմից նշված անունով։

Անհատական նախաձեռնությամբ կառուցված կամուրջների անունները պահվում էին նաև կառուցողի մեռնելուց հետո և վերանորոգումները կատարվում էին նրանց ժառանգորդների կողմից։ Ժառանգորդներ չունենալու դեպքում, հավաքական աշխատանքով վերանորոգումը կատարելուց հետո, դարձյալ պահվում էր կառուցողի անունը։

Բացի մայր խճուղու և մեծ գետերի վրա պետական միջոցներով կառուցված մեծ կամուրջներից, մնացյալ բոլոր կամուրջները կառուցվել էին ժողովրդի կողմից՝ հավաքական աշխատանքով։

Գյուղամիջյան կամուրջների կառույցը նախնական ձև ուներ։ Ջրի երկու ափին հաստատուն քարե պատեր, որանց վրա հենված հաստ գերաններ, որոնք ծածկվում էին հողով կամ, լավագույն դեպքում, մեխում էին տախտակներ։ Գյուղամիջյան կամուրջների նորոգումը կատարում էր գյուղի բնակչությունն իր միջոցներով։

* * *

Դերսիմում, բացի շրջանային կենտրոններից, փոստ-հեռագրատներ չկային։ Հեռագրին փոխարինում էր հավարը։ Ունեին նաև հատուկ եղանակներ, որոնք թե ճանապարհի ուղղությունն էին

---

[1] Մեծ գետի կամուրջը Կոթերի կամուրջի նման ավանդական պատմություն ուներ, սակայն պանք ենք առնում մեջ բերելու, որովհետև, թեև տարբեր փոփոխակով, բայց գրեթե նույնն է։

[2] Հովսեփաթ Պարպարո Վենետիկցին 1471 թ. Երդնկայից անցնելիս խոսում է Արշակա կամուրջի մասին, որը 17 կամար է ունեցել։ Նույնը վկայում է նաև 1581 թ. Անգլիացի Նյուպորի անունով հարաբարպետը, այնպես, որ կամուրջը կանգուն է եղել մինչև XVI դարի վերջերը։

[1] Նշանակ (նշանկյաշ)՝ ճամփեցիչ, արհեստական բարակիտուկ, որը մի բանի մետր բարձրություն ունեցող և իրար

ցույց տալիս և թե ծառայում վոանդի ազդարարմանը, սրբ «հավարե-լո-հավարե» ազդանշանով անցնում էր սարից-սար, գյուղից-գյուղ և ամենակարճ ժամկետում լուրը հասցնում բոլորին։

Դերսիմում ընդունված սովորություն էր, որ հավարը բարեկամություն, թշնամություն չէր ճանաչում։ Այն ստացող գյուղը կամ անհատը, եթե նույնիսկ թշնամի լիներ հաղորդողին, պարտավոր էր ճշգրտորեն և ամենաարագ կերպով ստացված լուրը հաղորդել հաջորդին։

Հավարը տրվում էր բարձր ժայռերի կատարից, չորս ուղղությամբ՝ դեպի արևելք, արևմուտք, հյուսիս և հարավ։ Տրված ուղղության վրա բնակություն կար թե ոչ, խնդիր չէր, հավարը տրվում էր այն իմաստով, որ ոչ միայն գյուղերը, այլև անտառներում, սարերում, ճանապարհներին դրտնրվող ամեն մեկը իմանար և իր կարգին փոխանցեր այն հաջորդին։

Հավարն ստացող գյուղն անմիջապես իր հավարատուներին[2] ուղարկում էր ճշտված տվյալներ և, նույն կարգով լուրը հաղորդում չորս ուղղությամբ։ Այդ ձևով տրված առաջին լուրը ալիքավորված թռչում էր ամեն ուղղությամբ և տարածվում ամեն շեն ու ավան։

Հավարատուն նախքան լուրի հաղորդումը, վստահ լինելու համար, թե իրեն լսողներ կան թե ոչ, նախ հավարատու[3] հատուկ հրացանով երեք անգամ կրակում էր օդի մեջ, ապա բղավում «հավարե-լո-հավարե»։ Լուրն ընդունողն իր կարգին կրակում էր օդի մեջ մի անգամ, որով հաղորդողը տեղեկանում էր, թե լուրը տեղ է հասել։ Պատահում էր, որ քամու ազդեցության հետևանքով հավարը տեղ չէր հասնում։ Նման դեպքերում գոռում էին մի քանի հոգի։

ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ

Դերսիմի տնայնագործությունը, արհեստն ու առևտուրը մեծ մասամբ գտնվում էին հայերի, մասամբ քրդերի (փայտամշակություն, կապերտաղործություն, ջեջիմագործություն՝ հայերից հետո), իսկ աննշան չափով՝ վարչական կենտրոններում բնակվող և բնակչության չնչին տոկոսը կազմող թուրքերի ձեռքին (պայտարություն, կյոնճիություն կամ դաստախություն, լեպլեպիհիություն, ադամարություն)։ Քրդերը թույլ չէին տալիս, որ թուրք արհեստավորները կամ մանրավաճառները, շրջուն փերեղակները (չարշի) մտնեն քրդական գյուղերը, հետևաբար, նրանք դատապարտված էին դուրս չգալու վարչական կենտրոններից։

Լեռնաշխարհի ինքնանկախ շրջանի գյուղերում առևտուրը դանվում էր հայերի ձեռքին, որոնք ոչ միայն շրջկենտրոնները, այլև գյուղերը շրջելու և ժողովրդի պահանջները բավարարելու ամեն տեսակ հնարավորություն ունեին։ Հայ առևտրականը կամ արհեստավորը գյուղը շրջկենտրոններին միացնող շաղկապն էր։ Գյուղացիները քաղաքացիներին չէին սիրում, իսկ առևտուրը նկատում էին խարեության միջոց։ Քրդերը թուրքերի հետ առևտուր չէին անում, վստահում էին հային և գյուղերում՝ թե շրջկենտրոններում կապվում հայ արհեստավորների ու առևտրականների հետ. Շրջկենտրոններում շատ վաճառականներ չկային, անսպահովություն և սպառման շուկայի սահմանափակ պահանջը ծնունդ էին տվել մանր առևտրի զարդացմանը։

Գյուղերում իրար հետ կամ դրսից եկող առևտրականների ու արհեստավորների հետ առևտուրը կատարվում էր փոխանակության կարգով, իսկ շրջկենտրոններում՝ մասամբ միայն դրամով։

Փոխանակության առանցքը ցորենն էր, արժեքները որոշվում էին ցորենով և ըստ այնմ գնահատում կաթնեղենի, մորթիների, անասունների, կապերտների և տեղական այլ արտադրությունների արժեքը։

Բացի ցորենից, որպես փոխանակության միջոց ընդունված էին նաև բուրդը և յուղը։ Ցորենի կոտը միջին հաշվով արժեր թրքական դրամով 5 ղուրուշ։ Չորս կոտ ցորենով կարելի էր դնել մի լիռ յուղ, ուրեմն՝ յուղի լիռը՝ (6 հոխա) արժեր 20 ղուրուշ։ Ձվի տասը հատը արժեր տաս փարա, հետևաբար մի կոտ ցորենի արժեքը հավասար էր 200 ձվի կամ մի լիռ բուրդը 4 կոտ ցորեն, և փոխադարձաբար։

Չարշիները մանուսան, չիթը, կտավը, աղը, բասման կամ դութենին կլկնապատիկ և եռապատիկ գներով փոխանակում էին կարագի, մորթու, բրգի, մեղրի և այլ կենսամթերքների հետ, որոնք

վրա շարված քարերով փոքր աշտարակ էր՝ անցորդին ուղղություն տալու համար։ Դրանք դտնվում էին ճանապարհների խաչմերուկներում։

[2] Դերսիմցիք առհասարակ բարձրախոս էին, նրանք սովորական զրույցի ժամանակ իսկ խոսում էին գոռում-գոչումով, մարդ կարծում էր, թե կռվում են, իսկ հավարատուները շատ ուժեղ ձայն ունեցող մարդիկ էին։

[3] Հավարատու հրացանը լայնափող շեշխանե հրացան էր, որով կապար չէին արձակում, այլ լցնում էին առատ վառոդ, ապա լավ խցում այն և կրակում։ Դա բարձր ժայռերի մեջ թնդանոթի ձայն էր հանում։ Այդ զենքը գործածվում էր նաև ամռանության ժամանակ, երբ աղչկա կուսությունն ավետում էին բնակ գյուղին։